թյունը և օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ ներհոսքը հակառակ ազդեցություն ունեն ընթացիկ հաշվի վրա, այսինքն՝ ինչքան մեծ է ներմուծման տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ, այնքան ավելի փոքր է ընթացիկ հաշվի մնացորդը (բացասական), և նույնը վերաբերում է օտարերկրյա ուղղակի ներդրումներին: Այս բացասական կապը պայմանավորված է նրանով, որ ընթացիկ հաշիվը տնտեսագիտորեն նույնացվում է զուտ արտահանման հետ, որը հավասար է ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուման տարբերությանը:

ЛУСИНЕ САРГСЯН

СТАТИСТИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ ТЕКУЩЕГО СЧЕТА ПЛАТЕЖНОГО БАЛАНСА АРМЕНИИ

Ключевые слова: *платежный баланс, текущий счет, динамика, экспорт, импорт, регресионный анализ, зависимая переменная, независимые переменные.*

В статье рассматриваются динамика и регресионный анализ текущего счета в Армении. В нынешней глобализации мировой экономики роль платежного баланса в развитии экономики еще важнее. Платежный баланс является отражением экономики, позволяющей исследовать текущую картину экономики, а также образ, созданный в прошлом. Анализ текущего счета особенно важен при обсуждении платежного баланса.

LUSINE SARGSYAN

STATISTICAL STUDY OF THE CURRENT ACCOUNT OF PAYMENT BALANCE OF ARMENIA

Key words: *balance of payments, current account, dynamics, export, import, regression analysis, dependent variable, independent variables.*

The article examines the dynamics and regression analysis of the current account in Armenia. In the current globalization of the world economy, the role of the balance of payments in the development of the economy is even more important. The balance of payments is a reflection of the economy, allowing you to explore the current picture of the economy, as well as the image created in the past. Analysis of the current account is especially important in the discussion of the balance of payments.

ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՐԴԱՐՅԱՆ
Զբոսաշրջության կառավարում, բակալավրիատ, 4-րդ կուրս

ՀՅՈՒՐԱՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *զբոսաշրջություն, փեղաբաշխման միջոց, հյուրատուն, գիշերակաց, ծանրաբեռնվածություն, որակավորում*

Հոդվածում ներկայացված են ՀՀ-ում զբոսաշրջության արդյունաբերության անբաժանելի մաս հանդիսացող հյուրատների՝ որպես փեղաբաշխման միջոցի զարգաց-

ման կարևորությունը, ոլորտում առկա հիմնախնդիրները և արդի հնարավորություն-ները:

Ժամանակակից շուկայական տնտեսության պայմանները սուր մրցակցություն են առաջացնում զբոսաշրջության ոլորտում, մասնավորապես՝ տեղաբաշխման միջոցների միջև՝ որպես զբոսաշրջիկներին գիշերակաց ապահովող օբյեկտներ: Այսօր համաշխարհային հյուրանոցային արդյունաբերությունը կարող է բավարարել զբոսաշրջիկի յուրաքանչյուր պահանջ[1]: Այսպիսի սուր մրցակցության պայմաններում յուրաքանչյուր տեղաբաշխման օբյեկտ ձգտում է ներգրավել մեծ թվով զբոսաշրջիկների, հետևաբար, յուրաքանչյուր օբյեկտի համար առաջնահերթ է դառնում որակյալ սպասարկումը, անվտանգությունը և մատչելիությունը:

«Հյուրատուն» հասկացությունը համեմատաբար նոր է, առաջին անգամ կիրառվել է 1990-ականների վերջին և լայնորեն գործածության մեջ է դրվել վերջերս:[2] Չնայած նոր լինելուն, այս երևույթը միանգամից թափանցեց գործարար միջավայր՝ դառնալով զբոսաշրջիկների նախընտրելի գիշերակացի օբյեկտ[3]:

«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ զբոսաշրջային տները հյուրանոցային տնտեսության այն օբյեկտներն են, որտեղ մեկ շենքի կամ բնակարանի տարածքում տրամադրվում է գիշերակացի ծառայություն, ինչպես նաև կազմակերպվում և մատուցվում են սննդի ծառայություններ[4]:

Այսօր ՀՀ-ում հյուրատների զարգացման հիմնական խնդիրը, պետության տեսանկյունից, որակի և գնի վերահսկողությունն է և դրանց համապատասխանությունը, որը ցույց տալու համար նախ դիտարկենք հյուրատների տեղաբաշխվածությունը ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի:



Գծապատկեր 1. ***Հյուրատների բաշխվածությունը ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի***[5]

---

[1] Տե՛ս Лойко О. Т., «Туризм и гостиничное хозяйство», 2007:

[2] http://studbooks.net/633055/turizm/rol_sredstv_razmescheniya_turizme

[3] Տե՛ս Осипова Е. Э., Ширихина Е. Ю., Гостевые дома как перспективная модель малого бизнеса в индустрии туризма, // Российское предпринимательство. 2011, том 12, № 12, էջ 157-161:

[4] Տե՛ս «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդված 9, կետ 10:

[5] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ առցանց հարթակներում գրանցված ՀՀ հյուրատների և Հյուրատների զարգացման հայկական ասոցիացիայի տրամադրած տեղեկությունների հիման վրա:

Հայաստանում այժմ գործում են 350-ից ավելի հյուրատներ, որոնց շուրջ 80%-ը գտնվում է մարզերում: Գծապատկերից երևում է, որ հյուրատների 46%-ը գտնվում է Կոտայքի, Տավուշի և Լոռու մարզերում: Հիմնականում հյուրատների սակավություն է նկատվում Արարատի, Շիրակի, Արագածոտնի և Արմավիրի մարզերում, որտեղ դրանց քանակը համապատասխանաբար կազմում է 5, 8, 10 և 12, մինչդեռ, Կոտայքի մարզում այսօր առկա է 65 հյուրատուն, որը բավականին լավ ցուցանիշ է, եթե հաշվի առնենք, որ Երևանում գործում է 70-ը:

Աղյուսակ 1

Հյուրատները ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, դրանց արժեքը մեկտեղանոց և երկտեղանոց համարներում, 2017 թ.[1]

Մարզերը	*Հյուրատան անվանումը*	*Մեկտեղանոց համարի արժեքը՝ ներառյալ նախաճաշը (ՀՀ դրամ)*	*Երկտեղանոց համարի արժեքը՝ ներառյալ նախաճաշը (ՀՀ դրամ)*
Արարատ	Heriknaz's B&B	13.000	19.000
	Gor's B&B	13.000	19.000
	Laura's B&B	13.300	19.000
Արագածոտն	Hatsekats	10.000	20.000
	My family B&B	11.250	15.000
	Aslanyan's B&B	11.820	11.820
Արմավիր	Artson	7.000	15.000
	Artson2	8.000	15.000
	B&B Musaler	17.200	34.200
Գեղարքունիք	S. A. S.	10.000	17.000
	Chez Yourik	13.500	20.000
	Artem & Naira	8.000	16.000
Կոտայք	Chez Yvette	12.000	18.000
	Narine B&B	7.000	14.000
	Ararat	10.000	20.000
Լոռի	Iris	8.500	15.000
	Chez Sergo	12.000	20.000
	Maghay	11.000	20.000
Շիրակ	Mountain Tea	8.000	16.000
	Armine's B&B	14.000	18.000
	Artush & Raisa B&B	7.000	10.000
Սյունիք	Ashot Chalounts	8.000	16.000
	Chez Seda	7.000	14.000
	Chez Saro	7.000	14.000
Տավուշ	Artsiv	8.000	15.000
	Kamar	7.500	15.000
	Nina	9.000	18.000
Վայոց ձոր	Arevik Happy House	8.000	16.000
	Noravank	7.000	14.000
	Old Bridge	12.000	24.000
Երևան	La Maison Du Medelin Doctor's House	10.000	18.000
	Gayane Simonyan	8.000	16.000
	Three Jugs B&B	9.500	16.000

[1] Աղյուսակ 1-ը կազմվել է հեղինակի կողմից՝ նշված հյուրատների տրամադրած տվյալների հիման վրա:

Իսկ այժմ ուսումնասիրենք հյուրատների գնային քաղաքականությունը ըստ ՀՀ վարչատարածքային միավորների. ընտրված է երեքական հյուրատուն, և ներկայացված են մեկտեղանոց և երկտեղանոց համարների գները:

Այսպիսով նկատելի է, որ Արարատի մարզում առկա է հյուրատների ամենաբարձր արժեքը՝ միջին գինը մեկտեղանոց սենյակի համար՝ 13.100 դրամ, իսկ երկտեղանոց սենյակի համար՝ 19.000 դրամ, մինչդեռ, գծապատկեր 1-ից երևում է, որ հյուրատներն ամենաքիչն են հենց այս մարզում, հետևաբար, Արարատի մարզում առաջանում է հյուրատների գնային քաղաքականության խնդիր, որը նաև նկատվում է Արմավիրի ու Գեղարքունիքի մարզերում, ինչպես նաև Արագածոտնի մարզում՝ միայն մեկտեղանոց համարների համար: Այս դեպքում հյուրատան և գիշերակացի այլ օբյեկտների գնային տարբերությունն աննշան է, հետևաբար, զբոսաշրջիկները նախընտրում են հյուրանոցներ կամ գիշերակացի այլ օբյեկտներ:

Հաշվի առնելով Երևանում և մարզերում հյուրատների տեղաբաշխվածությունը՝ տոկոսային արտահայտությամբ հաշվարկներից հետո ստացանք ՀՀ-ում հյուրատան մեկտեղանոց համարի միջին արժեքը՝ 9350 դրամ, իսկ երկտեղանոցինը՝ 17070 դրամ: Այսպիսով, հիմնականում այն մարզերում՝ Արարատ, Արագածոտն, Արմավիր և Գեղարքունիք, որտեղ քիչ է հյուրատների քանակը, գինը միջին գնային սահմանից բարձր է: Նկատելի է նաև այն, որ թեև Շիրակի մարզում առկա է ընդհամենը 8 հյուրատուն, այնուամենայնիվ, մեկտեղանոց համարի արժեքը միջին գինը գերազանցում է նվազագույն 3,3%-ով, իսկ երկտեղանոց համարինը ցածր է միջին գնից: Այս փաստը կապված է մարզում առկա հյուրանոցների ցածր գների հետ, օրինակ՝ Գյումրի քաղաքում գտնվող Vale հյուրանոցի արժեքը մեկտեղանոց համարում 9,000 դրամ է[1], որը ավելի ցածր է, քան մարզում հյուրատների միջին գինը (9,660 դրամ) և, բացի դրանից, առաջարկում է որակյալ պայմաններ՝ ի տարբերություն մարզում գործող այլ հյուրատների:

Իհարկե, նման գները կարող են պայմանավորված լինել նաև պահանջարկով, հետևաբար, ուսումնասիրենք, թե քանի այցելու են ընդունում հյուրատները ըստ մարզերի:

ՀՀ յուրաքանչյուր մարզից և Երևան քաղաքից դիտարկենք մեկ հյուրատուն և համապատասխանաբար՝ զբոսաշրջային այցելությունների աճի շարժընթացը 2015-2017 թթ. (հյուրատները յուրաքանչյուր մարզում և Երևան քաղաքում ընտրված են այցելությունների միջին քանակին համապատասխան):

Աղյուսակից պարզ է դառնում, որ 2015-2017 թթ. հյուրատներում հիմնականում զբոսաշրջիկների թվի աճ է նկատվել: Ամենաբարձրը գրանցել է Կոտայքի մարզի Narine B&B հյուրատունը՝ 2016-2017 թթ. զբոսաշրջիկների թիվը հասցնելով 1000-ի՝ նախորդ տարվա համեմատ գրանցելով 50% աճ (ըստ հյուրատան սեփականատիրոջ տրամադրած տվյալների՝ հյուրատունը 2017 թ., նախորդ տարվա համեմատ, գինը իջեցրել է 12.5%-ով): Նշված հյուրատունը 2016 թ. ունեցել է 500 այցելու, գինը կազմել է 8,000 դրամ, հասույթը՝ 4 մլն դրամ, իսկ 2017 թ. ունեցել է 1000 այցելու, գինը նվազել է 12,5%-ով՝ կազմելով 7,000 դրամ, որի դեպքում հյուրատան հասույթը կազմել է 7 մլն դրամ: Այսպիսով, նկատելի է, որ գնի նվազեցումը հանգեցնում է հյուրատնե-

[1] Տեղեկությունը տրամադրել է Vale հյուրանոցը:

րի այցելությունների ավելացման, քանի որ հյուրատներ հիմնականում ընտրում են մատչելիության համար, իսկ չնչին գնային տարբերությունը կհանգեցնի գիշերակացի այլ օբյեկտի ընտրության:

Աղյուսակ 2

2015-2017 թթ. զբոսաշրջիկների այցելության շարժընթացը[1]

Մարզ	Հյուրատան անվանումը	2015	2016	2017
Արարատ	Heriknaz's B&B	200	300	350
Արագածոտն	Hatsekats	50	50	70
Արմավիր	Artson	200	300	400
Գեղարքունիք	Artem & Naira	150	280	300
Կոտայք	Narine B&B	500	500	1000
Լոռի	Chez Sergo	500	550	700
Շիրակ	Mountain Tea	80	80	80
Սյունիք	Ashot Chalounts	80	80	150
Տավուշ	Kamar	500	600	900
Վայոց ձոր	Old Bridge	300	500	650
Երևան	Gayane Simonyan	600	700	900

Այսպիսով, կատարելով համապատասխան հաշվարկներ, պարզեցինք 2017 թ. հյուրատների միջին ծանրաբեռնվածությունը ՀՀ մարզերում և Երևանում:

Աղյուսակ 3

Հյուրատների միջին ծանրաբեռնվածությունը ՀՀ-ում 2017 թ.[2]

Մարզ	Միջին զբաղվածությունը 2017 թ. (այցելու)
Արարատ	1750
Արագածոտն	700
Արմավիր	4800
Գեղարքունիք	8900
Կոտայք	65000
Լոռի	23800
Շիրակ	640
Սյունիք	3750
Տավուշ	54900
Վայոց ձոր	20800
Երևան	63000

Աղյուսակից պարզ է դառնում, որ Երևանում, Կոտայքի և Տավուշի մարզերում, որտեղ մեծ թվով հյուրատներ են գործում և ունեն միջինից ցածր գին (բացառությամբ Կոտայքի մարզի, որտեղ մեկտեղանոց համարի միջին գինը գերազանցում է նվազագույն 3.3%-ով), ավելի շատ հյուրեր են ընդունում, ի տարբերություն Արարատի, Արագածոտնի և Արմավիրի մարզերի, որտեղ, բարձր գնի հետ մեկտեղ, ծանրաբեռնվածությունը փոքր է: Նկատենք նաև, որ այս մարզերում գնի նվազեցումը, այլ հավասար պայմաններում, կհան-

[1] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ նշված հյուրատների տրամադրած տվյալների հիման վրա:

[2] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ գծապատկեր 1-ի և աղյուսակ 2-ի տվյալների հիման վրա:

գեցնի այցելուների քանակի աճի: Այսինքն, հյուրատներում բարձր գինը հանգեցնում է այցելությունների կրճատման. զբոսաշրջիկները նախընտրում են գիշերել հյուրանոցներում, քանի որ գնային տարբերությունը չնչին է: Օրինակ, Արարատի մարզում գտնվող Eco Lodge in the Caucasus Wildlife Refuge-ում մեկտեղանոց համարի արժեքը 21000 դրամ է, իսկ երկտեղանոցինը՝ 30000 և ունի բավականին բարձր ծանրաբեռնվածության մակարդակ, որը, սակայն, իջեցնելով միջին գնային մակարդակի, այլ հավասար պայմաններում կարող է ապահովել ավելի բարձր ծանրաբեռնվածություն և շահույթ: Նույնը կարող ենք ասել նաև Շիրակի մարզի մասին, որտեղ թեև գինը համեմատաբար ցածր է, բայց հյուրատները պետք է հաշվի առնեն մարզում առկա հյուրանոցների կամ այլ գիշերակացի օբյեկտների արժեքները:

Վերը նշվածում գնի նվազեցումը իհարկե վերաբերում է նվազագույն ծառայություններ մատուցող հյուրատներին, որոնք զբոսաշրջիկն ընտրում է մատչելիության համար: Այստեղ առաջանում է ևս մեկ հարց. ինչպե՞ս տարբերել հյուրատների կողմից մատուցվող ծառայությունները, քանի որ այն հյուրատները, որոնք միայն գիշերակաց և նախաճաշ են ապահովում, գտնվում են ոչ բարվոք վիճակում և չունեն համապատասխան սանիտարահիգիենիկ պայմաններ և առաջարկում են նույն գինը, ինչ այն հյուրատները, որոնք ապահովում են այս պայմանները և նաև մատուցում են բազմազանեցված (դիվերսիֆիկացված) ծառայություններ:

Կարծում ենք՝ խնդրի լուծումը հյուրատների որակավորումն է, որը կարող է իրականացնել Հյուրատների զարգացման հայկական ասոցիացիան, քանի որ հակառակ դեպքում զբոսաշրջիկի դրական տպավորությունների ամբողջականությունը կարող է խախտվել չորակավորված հյուրատան պատճառով: Այս դեպքում զբոսաշրջիկը չի կարողանա տարբերել, թե ինչ դասակարգում ունի տվյալ հյուրատունը, և ինչ գնային սահման պետք է ակնկալել դրանից: Շատ հաճախ զբոսաշրջային փաթեթներում ընդգրկված են լինում հյուրատներ, որոնք գնային առումով նույնն են, սակայն որակապես տարբեր են, և բնականաբար, զբոսաշրջիկները բողոքում են՝ պահանջելով նույն կարգի սպասարկում: Պատճառը, իհարկե, հյուրատների պարտադիր դասակարգման բացակայությունն է, քանի որ, եթե զբոսաշրջիկը նախօրոք տեղյակ լինի հյուրատան կարգին, ապա պատկերացում կկազմի մատուցվող ծառայությունների և գնի վերաբերյալ:

Այսպիսով, հյուրատները ՀՀ-ում կարող են զարգանալ և ապահովել ամբողջ համայնքի զարգացումը, եթե իրականացվի հյուրատների պարտադիր որակավորում, յուրաքանչյուր կարգի հյուրատան համար մշակվեն որակավորման հստակ չափանիշներ, և նույն կարգն ունեցողները կարողանան որոշակի գնային համապատասխանություն ապահովել: Այս դեպքում հյուրատների հանդեպ վստահություն կստեղծվի թ՛ե զբոսաշրջիկների, թ՛ե զբոսաշրջային օպերատորների և գործակալների կողմից, և, ներառվելով զբոսաշրջային փաթեթներում, դրանք կապահովեն մեծ զբոսաշրջային հոսքեր և կնպաստեն համայնքային զբոսաշրջության զարգացմանը: Անհրաժեշտություն է նաև վերստուգող մարմնի առկայությունը, որը կիրականացնի հյուրատների որակավորում և կհետևի հետագա համապատասխանեցմանը իրենց կարգերին: Հյուրատներում ազգային ավանդույթների և սովորույթների պահպանությունը կարևորելով՝ առաջարկում ենք նաև հյուրատների դասակարգ-

ման համար որպես խորհրդանիշ օգտագործել նուռը, այսինքն՝ առաջին դասի հյուրատունը կստանա երեք, երկրորդ կարգի հյուրատունը՝ երկու, իսկ երրորդ կարգի հյուրատունը՝ մեկ նուռ:

СУСАННА САРДАРЯН

СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ В РАЗВИТИИ И ПЕРСПЕКТИВЫ ГОСТЕВЫХ ДОМОВ В ТУРИЗМЕ В РА

Ключевые слова: *туризм, средство размещение, гостевой дом, ночлег, средняя занятость, квалификация.*

В статье подчеркивается важность развития гостевых домов как неотъемлемой части индустрии туризма, подчеркивается важность их развития как средства размещения, обсуждаются существующие проблемы и пути для их развития в Армении.

SUSANNA SARDARYAN

MODERN TRENDS AND PERSPECTIVES OF DEVELOPMENT OF GESTHOUSES IN TOURISM INDUSTRY OF RA

Key Words: *tourism, means of accommodation, guest house, overnight price, average employment, qualification.*

The article presents and outlines the importance of development of guesthouses in Armenia, as one of the main directions in the tourism industry. It includes the revelation of the contemporary problems in this field and outlines the importance of this industry as a significant way of allocation.

ԼՈՒՍԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Միջազգային տնտեսական հարաբերություններ, մագիստրատուրա, 1-ին կուրս

ՀՀ ԲՋՋԱՅԻՆ ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնաբառեր. *հեռահաղորդակցություն, բջջային կապ, շուկայական մասնաբաժին, հիմնախնդիրներ, մրցակցություն*

ՀՀ հեռահաղորդակցության ոլորտը ներկայումս ամենաանհրաժեշտ և արագ զարգացող ոլորտն է: Բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցման սեգմենտը ամենամեծ մասնաբաժինն ունի շուկայում: Ըստ կատարված վերլուծության՝ շուկայում տարիներ շարունակ առաջատար ընկերությունը եղել է և մնում է Viva Cell-ը: Ընդհանուր վերլուծությունը ցույց է տալիս, որ շուկան հասունացած է և հագեցած, սակայն կան բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք կարևոր են ինչպես բաժանորդների, այնպես էլ տնտեսության համար, ուստի օպերատորները պետք է ավելի ստեղծագործաբար վարեն իրենց մարքեթինգային ռազմավարությունը և ավելի ճկուն արձագանքեն փոփոխվող նորարարություններին: